

ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ ԵՒ ՍԵՐԿԷՅ ՄԻԿՈՅԵԱՆ ԿԸ ԶԵՇՏԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Սովետական 90 հոգիները պատուիրակութեան մը ընկերացող, լրագրող եւ արձակագիր Զօրի Բալայեան եւ տնտեսագէտ Սերկէյ Միկոյեան, հարցազրոյցի մը ընթացքին, Մ. Նահանգներու մեր անդլիատառ պաշտօնաթերթ «Միրըր-Սփիք-թէյթըր»-ի խմբագիր Ընկ. Արա Գալայճեանին յայտնած են իրենց լաւատեսութիւնը՝ Լեւոնային Ղարաբաղի Հայաստանի վերամիացման հաւանականութեան մասին:

Առաւելարար գիտնականներէ բաղկացած պատուիրակութիւնը, Սեմքըր ֆօր Սովիէթ-էմբրիֆա Տայեյոկ մարմինին հրաւերով, Յունուար 27էն ի վեր կը գտնուէր Ուաշինկթըն, ուր զանազան հանդիպումներու ընթացքին ապագինման ու խաղաղութեան հարցերը քննարկուած են: Պատուիրակութիւնը Մոսկուա վերադարձած է Փետրուար 14ին:

Բալայեանի եւ Միկոյեանի յառաջ բերած գլխաւոր պատճառարանութիւնը այն եղած է, թէ սովետական նոր քաղաքականութեան՝ կլազնաքի ու վերքրոյքայի իրրեւ հետեւանք, Լեւոնային Ղարաբաղի մօտ 150,000 հայերը, որոնք բընակչութեան 80 առ հարիւրը կը ներկայացնեն ներկայիս, աւելի համարձակ կերպով կրնան պնդել վերամիացման վրայ: Այսպէս, մօտ 100 հազար ստորադրութիւն մը այս Յունուարին ներկայացուած է Մոսկուա՝ Համայնավար կուսակցութեան Կենտկոմի առընթեր վերջերս վերակազմուած Ազգութիւններու Յանձնախումբին, որպէսզի ՀԱՆՐԱՔՈՒԷՄԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՂ, որոշելու համար այդ ինքնավար մարզին վարչա-կառավարական պատկանելութիւնը:

Հայկական այս պատուիրակութիւնը, որ բաղկացած էր 13 զարաբաղցիներէ ու 4 մոսկուայաբնակ անձերէ - ներառեալ՝ Կարմիր բանակի երեք հայ զօրավարներ - ներկայացած են Ազգութիւններու Յանձնախումբի ղեկավար Տեմիշչին եւ յանձնած փաստաթուղթերու խոշոր թըղ-

թածրար մը՝ Ղարաբաղի հայկականութիւնը հաստատող: Պատուիրակութեան անդամները գանդատած են, թէ անցնող 60 տարիներու ընթացքին, Ղարաբաղի հայկականութիւնը արծարծած ըլլալնուն սրտաճառով ամբաստանուած են որպէս նացիոնալիստ: Իսկ Տեմիշչեւ պատասխանած է ըսելով. «Ընդհակառակը, ես ձեր սրարքը կը նկատեմ հայրենասիրական, եւ դուք հայաստանասէրներ էք, որովհետեւ մտահոգ էք ձեր հայրենիքի ապագայով»:

Թէ՛ Բալայեան եւ թէ՛ Միկոյեան Ընկ. Գալայճեանին յայտնած են այն կարծիքը, թէ որքան շուտ Հայաստանի մէջ կլազնաքը եւ վերքրոյքայի հաստատուին, այնքան աւելի սխիւղիւրանայ այս հարցին լուծումը. որովհետեւ Ղարաբաղի հայ դիւղացիութիւնը շատ զգոյշ է որեւէ նախաձեռնութիւն ստանձնելու, պարզ այն պատճառով, որ կորսնցուցած է վստահութիւնը, թէ որեւէ բան կը փոխուի տիրող իրավիճակին մէջ,

Բալայեան եւ Միկոյեան հաւատք յայտնած են, թէ նախ Ղարաբաղի հարցը պէտք է լուծել, որովհետեւ քաղաքականապէս աւելի դիւրին է: Բայց անոնք միաժամանակ պնդած են, որ հայ ժողովուրդը նոյնքան մը իրաւունք ունի Նախիջեւանի հողին, ինչպէս Արեւմտեան Հայաստանի հողերուն, ու շեշտած են, որ Նախիջեւանի մէջ հայերու ներկայութեան նուազումը ոչ մէկ արգելք կը ներկայացնէ այդ հողին նկատմամբ հայ ժողովուրդին ունեցած իրաւունքներուն:

Սոսերով Հայաստանի մասին, Բալայեան շեշտած է, որ երկրին շուրջ 29,000 քառ. քմ. տարածութեան միայն հինգ առ հարիւրը մշակելի է, իսկ տարիներու ընթացքին, ու բազում գժուարութիւններով, մշակելի տարածութիւնը աւելցած է չորս առ հարիւր եւս, եւ հացահատիկի ընդհանուր արտադրութիւնը տարուան մէջ 26 օրով միայն կը բաւարարէ երկրին բնակչու-

թեան պահանջը: Մնացեալ օրերուն համար ցորենը պէտք է ներածուի:

Հայաստանի ջուրի ազրիւրները շատ սահմանափակ են, ու «ՁՈՒՐ ԵՒ ՀՈՂ ԱՅԼԵԱՍ, ՀԵՆ կրնար ապրեցնել 3.5 միլիոնի բնակչութիւն մը 29,000 քառ. քմ. տարածութեան վրայ», ըսած է Բալայեան: Լեւոնային Ղարաբաղը ինքնին միայն Սորհրդային Հայաստանի բնակչութիւնը կրնայ կերակրել, ու միաւորման պարագային՝ Հայաստանի դալիք հարիւր տարուան կեանքը կրնայ ապահովել, եզրակացուցած է Բալայեան:

Ղարաբաղի հարցը ոչ միայն տեղական կամ սոսկ հայ ժողովուրդի, այլեւ Ռուսաստանի համար ալ ռազմավարական հարց մըն է, որովհետեւ ռուսեր եւ հայեր դարերով ջանացած են Ռուսական կայսրութեան սահմանները ապահովել բերդաքաղաքներու դօտով մը՝ իրրեւ պաշտպանութեան շրջան, ինչպէս՝ Ալեքսանդրապոլ, Կարս, Էրզրում: Եւ յանկարծ, այս կացութեան մէջ, 1920ին, ոմն Ստալին խախտած է դարաւոր վարքադիժը, տեղի տալով թրքական պահանջներուն, Նախիջեւանն ու Ղարաբաղը դընելով Ատրպէյճանի իրաւասութեան եւ հակակըշիւն տակ:

Թուրքիա կրցաւ այս ձեւով սովետական հարաւային սահմաններէն ներս ազդեցութիւն բանեցնել, որովհետեւ տակաւին կը հաւատայ, թէ Ատրպէյճանը բազմազգ պետութիւն է, կազմուած թաթարներէ, ռուսերէ, հայերէ ու կը պատկանի ամբողջ Սովետական Միութեան: «Թուրքիա ոչ մէկ պահանջ կրնայ ունենալ Ատրպէյճանի հաւատին», զօրաւոր կերպով շեշտած է Զօրի Բալայեան: Իր կայծիքով, Ղարաբաղի Հայաստանի հետ միացման գլխաւոր հակառակութիւնը պիտի դայ փան-իսլամիզմի ու փան-թուրքիզմի հետ:

Փան-իսլամիզմի գործակալները արդէն կեդրոններ հաստատած են Սովետական Միութեան դանազան քաղաքներուն մէջ, ինչպէս՝ Պաքու, Թաշքենթ, Մախաչքալա եւ Ուֆա: